

Ճակս , նոյնպէս պիտի ընէի , և յօժա-
րութեամբ ընտրէի ասիկայ :

Նոյնպէս ալ , (կ'ըսէր) , ուրիշ անա-
տուններէն մարդիկներուն կ'անցնին և
ասոնցմէ անոնց . անիրաւները՝ վայրե-
նիներու , իսկ արդարները՝ ընտանինե-
րու փոխուելով , և ամէն կերպ խառ-
նուրդ կ'ըլլայ :

Արդ , երբոր բոլոր հոգիները կեան-
քերնին կ'ընտրեն՝ ինչ որ վիճակի , կար-
գաւ Ապրետիսին կ'երթան . ան ալ ամէն
մէկուն՝ ինչ դե որ ընտրեր է նէ ,
զանի իրեն կենաց պահապան հետը կը
խաւրէ և ընտրած բաներուն կատարող :
Մայց առաջ Արթովին կը տանի՝ որ ա-
նոր ձեռքին ու իլին շրջանին պտուտքին
տակը հաստատէ վիճակաւ ընտրած ճա-
կատագիրը : Ետը ալ հանդիպելէն ետ-
քը , դարձեալ Մորոպոսին մանուածքին
կը տանի՝ որ մանածները անդառնալի
ընէ : Մնկից նոյնհետայն հարկին ա-
թուին տակը կ'երթան . անկից ալ անց-
նելէն ետքը , երբոր մէկալլոնք ալ կ'անց-
նին , ամէնքը մէկտեղ սաստիկ շողիով
մը և մորիկով կ'երթան Աթէի դաշ-
տը , որ ամենեւին ծառէ ու երկրի բոյ-
սերէ դատարկ է . ուստի իրիկուն որ
ըլլայ Մեծիտ գետին քով կը բնակին ,
որուն ջուրը ամենեւին աման մը չտանիր .
ուստի իւրաքանչիւր չափ մը միայն ջրէն
խմելու է . իսկ ոյք որ խոհեմութեամբ
չեն ամրանար , չափէն աւելի կը խմեն ,
և միշտ խմողը՝ ամէն բան կը մոռնայ :
Այլ երբոր քնանան ու կէս գիշեր ըլլայ ,
որտուժ և շարժ կ'ըլլայ , և անկից յան-
կարծակի ամէն մէկը ասդիս անդին կը
վերանան , ՚ի ծագումն ցատքելով , աս-
տեղաց պէս : Ենքն ալ (Արոսը) արգե-
լուեր էր ջրէն խմելու , իսկ ուսկից և
ինչպէս ՚ի մարմինն գալը , բնաւ չէր գի-
տեր . բայց յանկարծ առտուն աչքը բա-
ցեր տեսեր էր զինքը խարուկին վրայ :

Այլ ահա այսպէս , ուլ Վլուկոն , աս
զրոյցս պահուեցաւ ու չկորաւ . զմեզ
ալ փրկէ՝ թէ որ անսանք իրեն . և Աթ-
թէի գետը աղուոր մը կ'անցնինք , և հո-
գինիս չենք պղծեր :

Ասան որոյ , թէ որ ինծի մտիկ ը-

նենք՝ հոգին անմահ համարելով և ա-
մէն չարիք և ամէն բարիք ընդունելու
կարօզ , միշտ վերի ճամբան կը բռնենք ,
և ամէն կերպով արդարութեան ետեւէ
կ'ըլլանք խոհեմութեամբ հանդերձ , որ
մենք մեզի ալ սիրելի ըլլանք և աստուա-
ծոց ալ , թէ հոս որ միանք և թէ երբ-
որ անոր մրցանակը առնունք , ինչպէս
յաղթողաց ժողով մը , և հոս ալ՝ հա-
զարամեայ ճամբուն մէջ ալ որուն վրայ
խօսեցանք , երջանիկ կ'ըլլանք ,” :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուորվիկոս ԺԶԻն վարքն ու մանր¹ :

Ապտեմբերի 3^{ին} առտուն երբոր
Թագաւորը կը հագուեցընէի , հարցուց
թէ արդեօք լուր մը առի հիւ սենեկա-
պետին վրայօք , և թէ Քարիզու խոռ-
վութիւնը երթալով ինչ կ'ըլլար : Պա-
տասխան տուի թէ Քս գիշեր քաղաքա-
կան պաշտօնեայ մը իմացուց ինծի , որ
բանտերը բազմութեամբ ժողովրդեան
կը լեցուին . և խոստացայ ուրիշ անգամ,
փոյթ ընելու որ կարևորագոյն լըրը ի-
մանալու անհոգ չըլլամ : “ Օգոյշ կեցիր,
ըսաւ Թագաւորը , չըլլայ թէ վտանգի
մը մէջ ձգելով ինքզինքդ , զմեզ միսակ
թողուս . վասն զի կը վախեմ որ խռով-
արարաց միտքն է զմեզ օտար մարդիկ-
ներու ձեռքը յանձնել ,” :

Առտուն ժամը 11^{ին} երբոր Թագա-
ւորը և իր ընտանիքը Թագուհոյն խու-
ցը ժողվուած էին , քաղաքական պաշ-
տօնեայ մը մօտեցաւ քովս , և ըսաւ որ
Թագաւորին խուցը երթամ , ուր որ կե-
ցեր էր Սանուէլ քանի մը հասարակաց
ատեանին անդամներովը : Հարցուց ին-
ծի Սանուէլ թէ “ Արդեօք ինչ ըսաւ
ինծի Թագաւորը հիւին կալանաւորու-
թեանը վրայօք : — Արտը քիչ մը ան-
հանգիստ է , ըսի , այս բանիս վրայ : —
Անացը վտանգ մը չկայ , ըսաւ Սա-
նուէլ . բայց պէտք է որ մէյմը Թագա-

¹ Տես . հտ . ԺԳ , երես 329 . հտ . ԺԴ , եր .
170 , 240 , 320 :

ւորին իմացընեմ որ ալ չի դառնար ինքը, և թէ ատենանը ուրիշի մը պիտի յանձնէ զթագաւորը . ուստի կրնաս աս բանս կերպով մը իմացընել թագաւորին . : Նայց ես աղաչեցի իրեն որ այս լուրը անձամբ տայ թագաւորին, և միանգամայն Սուրբ Գրիգորի փափաքը յայտնեցի մէկ անգամ մ' ալ նորէն տեսնելու զ՛իւ : Ետ դժուարութեամբ իջաւ Սանուէլ, թագաւորին կեցած խուցը . և հոն իմացուց իրեն հասարակաց ատենին տուած վճիռը իւ սենեկապետին վրայ, և ըսաւ միանգամայն թէ ուրիշ մը պիտի գար անոր տեղը : « Սեծապէս շնորհակալ եմ, ըսաւ թագաւորը . իմ որդւոյս սենեկապետն ալ կրնայ ինծի ծառայել, և եթէ զան ալ չէք ուզեր, ես ինծի կը ծառայեմ, որովհետեւ ալ իմ բանս լմնցած է . » : Սերջը իմացուց իրեն թագաւորը ընտանեացը ճերմակեղինաց և ուրիշ զգեստներու նկատմամբ ունեցած կարօտութիւնը . Սանուէլ յանձն առաւ իմացընել ատենին : Արթաւու ատեն հարցուցի իրեն թէ « Երբեք զիտեան շփութութիւնը դեռ կը շարունակուի արդեօք . » . և տուած պատասխանէն իմացայ՝ թէ շատ վախ կար որ ժողովուրդը յանկարծակի աշտարակին վրայ վազէ . և ըսաւ թէ « Նիստ գէշ վիճակի մէջ էք, բայց մի վախէք, սիրտ առէք ու քաջալերուեցէք . » :

Սանուէլի երթալէն ետքը՝ թագաւորը ընտանիքովը ուզեց պարտեզը քալել, բայց պահապանները չթողուցին : Վիչ մը ետքը երբոր սեղան նստած կը ճաշէին, մէյմըն ալ սարսափելի աղաղակ մը փրթաւ թմբուկներու խառն բազմութեան ձայներով . ամէնքը խռոված և սարսափած ելան սեղանէն և թագուհւոյն խուցը քաշուեցան : Իսկ ես վար իջայ որ կերակուրս ուտեմ (ձիզոնի և անոր կնոջը հետ, որոնք աշտարակին մէջ ծառայութիւն կ'ընէին : Հազիւ թէ սեղանի նստանք՝ մէյմըն ալ պատուհանէն արիւնտտած գլուխ մը ցուցրցին նիզակի մը ծայրը խոթած . աս որ տեսաւ (ձիզոնին կինը՝ սարսա-

փելի աղաղակ մը ձգեց . իսկ անօրէն ները կարծելով թէ թագուհին էր պուռացողը, սկսան անգուժ կերպով մը ծիծաղիլ . որովհետեւ կը կարծէին որ թագաւորը ընտանիքովը սեղան նստած ըլլալով՝ հարկաւ ամէնքն ալ տեսած պիտի ըլլային այդ սարսափելի տեսարանը : Ամսպալ իշխանուհւոյն գլուխն էր անիկայ, որուն դէմքը թէպէտ այնպիսի բռնամահ վախճանաւ կերպարանափոխեղեր էր, բայց դեռ կերպարանաց գծագրութիւնը բոլորովին աւրուած չէր, և դեղին ու գանգրահեր մազերը չորս կողմէն ձգուած՝ միակերպ ասդին անգին կը շարժէր : Ետ մը թագաւորին գացի եղածը և տեսածս պատմելու, բայց վախէս այնչափ փոխուած էի և երեսիս գոյնը նետած, որ տեսնելուն պէս զիս թագուհին իմացաւ որ բան մը կայ . սակայն ես բան մը չըսի իրեն : Սուղէի մինակ թագաւորին և կամ Աղիսաբէթ տիկնոջ իմացընել, բայց քովը քաղաքական պաշտօնեաներ կեցած ըլլալով՝ չկրցայ բան մը ըսել : « Ինչո՞ւ կերակրոյ չես երթար . » ըսաւ թագուհին : « Ստասխան տուի իրեն . » « Թողութի կ'ընես, տիկին, այսօր քիչ մը տկար եմ . » : Նոյն միջոցին քաղաքական պաշտօնեայ մը ներս Տաճարը մտաւ, և քիչ մը ատեն ծածուկ իր պաշտօնակիցներուն հետ խօսելէն վերջը, թագաւորը հարցուց թէ արդեօք վտանգ մը կայ իր անձին և ընտանեացը, և թէ արդեօք ապահով է տեղերնին : « Զայն մը ելեր է քաղքին մէջ, անոնցմէ մէկը պատասխան տուաւ թագաւորին, թէ հասարակաց կամքն ըլլայ որ ալ Աշտարակին մէջ չընակիք, և թէ մէյմը ժողովրդեան տեսնուիք պատուհանէն . ժողովուրդը պէտք է որ վստահութիւն ունենայ իրեն գլխաւորներուն վրայ . » :

Նայց երթալով կը սաստկանային խռուովարարաց աղաղակները Տաճարին չորս կողմը, որոնց մէջ կը լսուէր նաև թագուհւոյն դէմալ նախատական խօսքեր : Վիչ մը վերջը վրայ հասաւ չորս հոգուով ուրիշ քաղաքական պաշտօնեայ

մըն ալ, որոնք պատգամաւոր էին ժողովրդեան կողմանէ . իմանալու համար թէ արդեօք թագաւորական ընտանիքը գեռ Տաճարին մէջն են : Ըստնցմէ մէկը որ ազգային պահապան զինուորի զգեստ հագեր էր, ուսերուն վրայ ըսպայի նշաններ դրած, և մէջքէն սուր մը կախած, ուզեց որ բանտարգեալները պատուհանէն մէյմը ժողովրդեան տեսնուին . սակայն երբոր տեսաւ որ պաշտօնեայք յանձն չառին աս բանս, դառնալով թագուհւոյն կոպիտ կերպով մը ըսաւ իրեն . “ Են ուզեր պաշտօնեայք որ տեսնաք Վամպալ իշխանուհւոյն գլուխը, զորն որ քիչ մը առաջ բերինք հոս ցուցնելու ձեզի, և իմացնելու թէ ինչպէս ժողովուրդը կը հանէ վրէժը իր թշնամիներէն և բռնաւորներէն . բայց խորհուրդ կուտամ ես ձեզի որ ժողովրդեան մէյմը տեսնուիք, և եթէ յանձն չէք առներ՝ գիտնաք որ ինքը ձեզի պիտի գայ ” : Ըս ըսպառնալիքներէս սաստիկ տագնապած թագուհին մարեցաւ ինկաւ . շուտ մը ձեռքէս եկած օգնութիւնը սկսայ ընել, և Նիսաբեթ տիկնոջ հետ մեծ աթոռի մը վրայ դրինք զինքը . տղաքը սաստիկ կուլային, և իրենց մանկական գրգուռները կը ջանային ուշաբերել մայրերնին . բայց զինուորին քարացեալ սիրտը չէր շարժեր աս խեղճ տեսարանէս . ան ատեն թագաւորը իրեն դառնալով ըսաւ աներկիւղ կերպով մը . “ Երդէն գիտես, պարոն, որ մենք ամէն բանի պատրաստ ենք, բայց դուն շատ աւելի աղէկ կ'ընէիր թէ որ չիմացնէիր թագուհւոյն աս աղետալի լուրը ” . այս խօսքիս դուրս գնաց անօրէնք իր ընկերներուն հետ : Հագիւ թէ թագուհին քիչ մը զօրանալով աչքերը բացաւ, տեսնելով տղոց լացը սկսաւ նորէն լալ և տագնապիլ . և քիչ մը վերջը ամէնքը մէկտեղ Նիսաբեթ տիկնոջ խուցը գրնացին ուսկից որ ժողովրդեան աղաղակները այնչափ սաստիկ չէին լսուէր : Ես քանի մը վայրկեան ալ թագուհւոյն խուցը կեցայ, և ծածուկ վարագուրին տակէն դուրս փողոցը նայեցայ, ուր նո-

րէն տեսայ Վամպալ իշխանուհւոյն գլուխը, զորն որ մեծ յաղթանակի մը պէս ասդին անդին կը տանէին . մէկ կողմանէ ալ չորս կողմերնիս եղած տրները հետզհետէ կը կործանէին, որպէս զի բոլորովին անպատսպար մնայ աշտաբակը : Եւ յայն միջոցին ուրիշ սրիկայ մըն ալ խեղճ իշխանուհւոյն սիրտը ձեռքը առած սրոյ ծայրը կ'անցընէր . քիչ մը ետքը անօրինաց խուճը մը միաբանած՝ ուզեցին բռնութեամբ աշտարակին դուռ բանալ, բայց տ' () ժոն քաղաքական պաշտօնեայն համառօտ բան մը խօսեցաւ ժողովրդեան . “ Եւրք, ըսաւ, աս մենեկին իրաւունք չունիք Ենթուանէթ թագուհւոյն գլուխը ուզելու . միայն շրջակայ գաւառաց իրաւունքը ձերն է . Գաղղիան՝ ասոնց պահպանութիւնը Բարիզայուց յանձնած է, և դուք պէտք է որ օգնէք մեզի պահպանելու զասոնք ինչուան որ ազգային ժողովը իր վրէժը հանէ ” : Եւ ամ մը աշխատիլ հարկ եղաւ զիրենք ցրուելու համար :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

[Նոտրայի մէջ դաները գարնետակ վրայ :

Նոտրայի մէջ մեծ դռները քիչ են, և պզտի դռներուն պէս միշտ գոց կը պահուին : Ենդհանրապէս բոլոր տուներուն մէջ մէկ ընտանիքէն աւելի չեն բնակիր, և աս պատճառաւս կ'իմացուի մէկէն թէ արդեօք դուռը զարնողը զով կը փնտռէ և թէ զարնողը ինչ աստիճանի մարդ է : Ըս բանս սովորութեամբ հաստատուէր է Նոտրայի մէջ, և ասոր համար ալ զարնուածքները համրանքի վրայ են, կամ ուժով ու նուազ զարնելուն վրայ :

Եւ որ դուռը մէկ անգամ զարնուի, կ'իմացուի որ զարնողը կաթնավաճառն է կամ ածխավաճառը, կամ տանը ծառան, կամ մուրացկան մը, և կը նշանակէ թէ կը խնդրէ՞մ հոնէ :

Իսկ թէ որ թեթեւ կերպով մը զարնուի . ըսել է թէ զարնողը թղթա-